ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5. 1958 Общественные науки

Հ. Թումանյան

ԿԱՊԻՏԱԼԻ, ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ, ՆԱԽԱՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ X—XIII ԴԱՐԵՐՈՒՄ*

Հայաստանի տնտեսական կյանքի բուռն վերելքը Անիի թագավորության երկու շրջաններում տեղի ունեցավ ֆեոդալական հարաբերությունների հետագա խորացման պայմաններում և ապահովեց արտադրության այդ եղանակի հետագա զարգացումը։ Այդ շրջանում էր, որ ստեղծվեցին և ծավալվեցին աշխարհիկ և հոգևոր կալվածատիրական տնտեսություններ, գյուղացիության որոշ մասը ճորտացնելու պրոցեսների հետ միասին։ Այդ նույն շրջանում էր, որ ֆեոդալական ռենտան, որպես հողի ֆեոդալական սեփականության տնտեսական իրացման եղանակ, ծավալվեց իր երեք ձևերով հանդերձ՝ բնավճար ռենտայի գերակշռությամբ։ Մի կողմից, ֆեոդալական կալվածքային տնտեսության զարգանալը և այդ հիման վրա աշխատավճար ռենտայի որպես հավելյալ արդյունքի կուտակվելը ֆեոդալների ձեռքը, մյուս կողմից, դեռևս չճորտացած գյուղացիներին բնավճար ռենտայի միջոցով շահագործելը հասցրեցին նրան, որ երկրում արտադրվող գյուղատնտեսական մթերքների մեծ մասը կենտրոնացավ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների ձեռքը։ Ֆեոդալները որքան էլ ագահ լինեին, չէին կարող սպառել գյուղատնտեսական մթերքների այն մեծ քանակությունը, որ կենտրոնացած էր նրանց տրամադրության տակ։ Այդ դրությունից դուրս գալու միակ ելքը ներքին և արտաքին առևտուրն էր, որը հնարավորություն պետք է տար, մի կողմից, իրացնել կուտակվող գյուղատնտեսական մթերքները և փրկել նրանց ոչնչացումից, իսկ մյուս կողմից, ձեռք բերել պերճանքի առարկաներ նույնիսկ ամենահեռավոր երկրներից։ Այսպիսով, առևտուրն այն կարևոր միջոցն էր, որը պետք է ծառայեր և ծառայեց ֆեոդալական հարաբերությունների ամրապնդմանը։ Առևտրին և ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը շատ չափով խթանում էր արհեստի զարգացումը, որը բարձր մակարդակի վրա էր գտնվում այս ժամանակաշրջանում, որպես քաղաքային կյանքի բաղկացուցիչ տարր։

Այս ամենի հիման վրա ծաղկում էր առևտուրը, հանդես էին գալիս վաճառականությունն ու դրա երկորյակը՝ վաշխառությունը։ Բնականաբար հարց է առաջ գալիս, այս ժամանակաշրջանի արտադրողական ուժերի զարգացումն Հայաստանում ստանո՞ւմ էր արդյոք անհրաժեշտ ասպարեզ ֆեոդալական հարաբերությունների կողմից, թե՞ այդ հարաբերություններն արդեն դարձել էին կապանքներ արտադրողական ուժերի զարգացման համար։ Ապրանքա-դրա-

---

* «Հայաստանի ժողովրդական տնտեսության պատմությունը» մենագրության «Զարգացած ֆեոդալիզմի շրջան» բաժնից կատարած ամփոփումներն ու եզրակացությունները։

Հ. Թումանյանի հոդվածով խմբագրությունը շարունակում է մտքերի փոխանակությունը Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի մասին X—XIV դարերում։ Սկիզբը տե՛ս «Տեղեկագիր», 1955, № 12, 1956, №№ 5, 6. 1958, № 3—խմբ.։

մական հարաբերությունները, վաշխառությունը ծառայո՞ւմ էին ֆեոդալիզմի ամրապնդմանը թե՞ ընդհակառակը, քայքայում էին ֆեոդալիզմը։ Ահա հարցեր, որոնց պատասխան տալը նշանակում է գնահատել Հայաստանի տնտեսական զարգացման աստիճանը X—XIII դարերում։

Պետք է մատնանշել, որ Հայաստանի տնտեսական զարգացման աստիճանը X—XIII դարերում որոշելու հարցում ներկայումս գոյություն ունեն երկու իրարամերժ կարծիքներ։ Ընկերներից ոմանք գտնում են, որ քննարկվող ժամանակաշրջանում ֆեոդալական հարաբերություններն Հայաստանում ապրում էին իրենց քայքայման շրջանը, որ արտադրողական ուժերի զարգացումը տեղի էր ունենում ֆեոդալական արտադրահարաբերությունների փոփոխման պայմաններում, որ այդ շրջանում Հայաստանում տեղի էր ունենում արտադրողներին արտադրամիջոցներից անջատելու պրոցես, որ սկսվել էր այսպես կոչված կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցեսը։ Կապիտալի նախասկզբնական կուտակման շրջան — ահա այն գնահատականը, որ տալիս են Հայաստանի այդ շրջանի տնտեսական զարգացմանը որոշ փիլիսոփաներ, գրականագետներ, պատմաբաններ և նույնիսկ տնտեսագետներ։

Կապիտալի նախասկզբնական կուտակման հարցը, որպես տնտեսագիտական ինքնուրույն հարց, քննության առարկա չի հանդիսացել մեր տնտեսագիտական և պատմական գրականության մեջ։ Այդ հարցը վերջին հինգ տարիներում քննվել է որպես հայկական Վերածնության սոցիալ-տնտեսական հիմքերի հարց ո՛չ միայն առանձին ընկերների հոդվածներում, այլև հատուկ դիսկուսիա է կազմակերպվել Հայկական ՍՍՌ ԳԱ-ի հասարակագիտական բաժանմունքի կողմից։ Դիսկուսիայից շատ չանցած այդ հարցի շուրջը ծավալուն հոդվածով հանդես է եկել փիլիսոփայական գիտությունների դոկտոր ընկ. Վ. Կ. Զալոյանը։ Այդ հոդվածում նա գերազանցապես քննում է հայկական Վերածնության սոցիալ-տնտեսական հիմքերի հարցը, կամ որ նույնն է կապիտալի նախասկզբնական կուտակման հարցը Հայաստանում X—XIII դարերում[1]։

Մեր հնարավորություններից և կոմպետենցիայից վեր ու դուրս համարելով հոդվածում արծարծվող մյուս հարցերը, այստեղ մենք ցանկանում ենք մեր կարծիքը հայտնել այն մասին, թե եղե՞լ է արդյոք կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցես քննարկվող ժամանակաշրջանի Հայաստանում։

Կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցեսը դա միևնույն ժամանակ ֆեոդալիզմի քայքայման պրոցեսն է, որովհետև «կապիտալիստական հասարակության տնտեսական կառուցվածքը առաջ է եկել ֆեոդալական հասարակության տնտեսական կառուցվածքից։ Սրա քայքայումը ազատել է նրա տարրերը»[2]։ Կ. Մարքսը Անգլիայի օրինակի վրա քննության ենթարկելով կապիտալի նախասկզբնական կուտակման պրոբլեմը՝ ցույց է տվել, որ նախասկզբնական կուտակման պրոցեսներն այնտեղ տեղի են ունեցել ֆեոդալական կախվածության և ճորտատիրական իրավունքի ոչնչացումից հետո, ուստի և այդ պրոցեսն իր հորձանուտի մեջ վերցրեց ինքնուրույն, ճորտական կախումից ազատ մանր արտադրողներին, որոնք XV—XVI դարերում շատ արագ կերպով դարձան պրոլետարներ։ Մանր արտադրողների վերածվելը ընչազուրկ պրոլե-

---

[1] Վ. Կ. Զալոյան, Հայկական Վերածնության մասին, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», № 12, 1955, էջ 85—114։

[2] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, էջ 686։

տարների՝ տեղի ունեցավ պետական, համայնական եկեղեցական հողերի բռնագրավման, բռնի հափշտակման, այդ հողերը ցանկապատելու և արոտատեղիների վերածելու, գյուղացիներին տնից ու բնից քշելու և այլ տմարդի միջոցներով։

Այդ պրոցեսի մյուս կողմը հարստության կուտակումն էր, կապիտալիստ ֆերմերի առաջ գալը գյուղատնտեսության, և կապիտալիստ ձեռնարկատիրոջ հանդես գալը արդյունաբերության մեջ։ Անգլիայում կատարված այդ պրոցեսները հանդիսանում են կապիտալի նախասկզբնական կուտակման կլասիկ ձևը։ Նույն այդ պրոցեսը ուրիշ երկրներում ուրիշ ձևով է դրսևորվել։ Այսպես, Ռուսաստանում նախասկզբնական կուտակումը, որը հատկապես ծավալվեց XIX դարի երկրորդ կեսին, երկրի տնտեսական զարգացման առանձնահատկություններին համապատասխան դրսևորվեց ճորտատիրական իրավունքի վերացմամբ ու գրանից բխած գյուղացիներին հողից զրկելով։ Այսպես կոչված նախասկզբնական կուտակման պատմությունը,— ասում է Մարքսը,— տարբեր երկրներում տարբեր գունավորում է ստանում և տարբեր փուլեր է անցնում և տարբեր հաջորդականությամբ ու տարբեր պատմաշրջաններում, սակայն ամբողջ պրոցեսի հիմքը գյուղացուն հողից ու տեղից զրկելն է, նրան էքսպրոպրիացիայի ենթարկելը։

Այսպիսով, մարքսիստական-լենինյան թեորիան կապիտալի նախասկզբնական կուտակման մասին ուսուցանում է, որ նախասկզբնական կուտակումն այլ բան չէ, քան արտադրողին արտադրամիջոցներից անջատելու, նրան էքսպրոպրիացիայի ենթարկելու պատմական պրոցես։ Անջատման այդ պրոցեսում արտադրամիջոցները վեր են ածվում կապիտալի և կազմում են կապիտալիստական ձեռնարկության նյութական սուբստրատը։ Անմիջական արտադրողներին էքսպրոպրիացիայի ենթարկելու այդ նույն պրոցեսը, նշանակում է վարձու բանվորների դասակարգի առաջացում։ Կարճ ասած, նախասկզբնական կուտակման պատմական պրոցեսը կապիտալիստական արտադրության նախապատրաստման պատմական պրոցեսն է, որի ընթացքում ստեղծվում են արտադրության այդ եղանակի առաջացման համար անհրաժեշտ նյութական և անձնական գործոններ՝ հարստություն և ազատ բանվորական ձեռքեր։ Պարզ է, ովքեր գտնում են, թե X—XIII դարերը Հայաստանի տնտեսական կյանքի պատմության մեջ բնութագրվում են որպես կապիտալի նախասկզբնական կուտակման շրջան, նրանք նախ և առաջ պետք է ցույց տան, որ գյուղացիությունը մասսայական կերպով ենթարկվել է էքսպրոպրիացիայի, որ դրան նախորդել է ճորտական հարաբերությունների վերացումը, որ արդեն գյուղում առաջացել էր կապիտալիստական հողագործություն, իսկ քաղաքում կապիտալիստ ձեռնարկատերեր, և մի շարք ուրիշ փաստեր, որոնց ամբողջությունը կազմել է պատմական այդ շրջանի բովանդակությունը՝ նախասկզբնական կուտակումը։ Այդպիսի փաստեր Հայաստանի իրականության մեջ չեն եղել, ուստի և դրանք ցույց տալ դժվար է։

Ֆեոդալական կալվածքի և կախյալ գյուղացիների տնտեսության մասին մեր կատարած վերլուծությունը ցույց տվեց, որ տնտեսական զարգացման ընթացքը X—XI դարերում տեղի էր ունենում ոչ թե ֆեոդալական կալվածքի էկոնոմիկայի քայքայման ուղղությամբ, այլ դրա ամրացման ուղղությամբ։ X—XI դդ. ինչպես և XII—XIII դարերում հայկական գյուղում տեղի ունեցող նոր երևույթների բովանդակությունը, ոչ թե գյուղացիներին հողից ու տնից

քշելն էր, նրանց էքսպրոպրիացիայի ենթարկելը, այլ նրանց վզին ճորտական լուծ գնելը։

Չնայած որ X—XI դարերում է, որ Հայաստանում նոր միայն սկսվել է գյուղացիության ճորտացման պրոցեսը, այնուհանդերձ ընկ. Զալոյանը գտնում է, որ դա հենց արտադրողներին էքսպրոպրիացիայի ենթարկելն էր միաժամանակ։

«Կարևորագույն փոփոխություններ կատարվեցին նաև գյուղի սոցիալական կյանքում։ Գյուղացիների դաժան շահագործումը նրանց հասցնում էր աղքատացման, իսկ դրա հետևանքով նրանք փախչում էին գյուղերից։ Այստեղից հասկանալի է, թե ինչու Հայաստանում մասնավորապես X դարից սկսած երևան է գալիս ճորտությունը՝ գյուղացիների ամրացումը հողին։ Կարևոր է նաև, որ ճորտատիրության երևան գալու հետ միասին Հայաստանում սկսվեց գյուղացիության էքսպրոպրիացիայի պրոցեսը։ Արտադրողի ճորտացումն ու էքսպրոպրիացիան միևնույն միասնական պրոցեսի, այն է՝ առևտրական կապիտալի ազդեցության տակ հին հարաբերությունների քայքայման, այսինքն՝ ֆեոդալիզմի քայքայման երկու կողմերն են»։ Ընկ. Զալոյանը շատ հետաքրքիր բացատրություն է տալիս նախ այն հարցին, թե ինչու հատկապես X դարից սկսած Հայաստանում երևան է գալիս ճորտատիրությունը։ Ստացվում է այնպես, որ գյուղացիները փախչում էին հողից, ուստի և հողատերերն ի պատասխան այդ փախուստի, ճորտացնում էին նրանց։ Ճորտատիրության երևան գալու նման բացատրությունը, նախ զուրկ է տնտեսական հիմքից և ապա չի համապատասխանում պատմական իրականությանը։

Ճորտատիրության երևան գալու հիմնական պատճառը ոչ թե գյուղացիների փախուստն էր, այլ կալվածատիրական տնտեսության երևան գալը, մի երևույթ, որ պետք է բացատրել նախաբարական սիստեմի քայքայման հիման վրա հողի ֆեոդալական սեփականության ամրացմամբ և այդ հողի վրա տերունական տնտեսություններ կազմակերպելով։ Այլապես ի՞նչ կնշանակեր փախուստի դիմած գյուղացիներին ճորտացնելը, եթե ճորտային աշխատանքի կիրառման ասպարեզ չլիներ։ Վերջապես իրական չէ այն բացատրությունը, որ իբրև թե ճորտացվել են փախուստի դիմած գյուղացիները, ընդհակառակը՝ փախչողները հենց ճորտացումից էին փախչում։ Անհասկանալի է նաև ընկ. Զալոյանի այն պնդումը, թե արտադրողի ճորտացումն ու էքսպրոպրիացիան միևնույն միասնական պրոցեսի՝ ֆեոդալիզմի քայքայման երկու կողմերն են։ Ամենևին էլ ոչ, գրեթե բոլոր երկրների պատմությունը ցույց է տալիս, որ ոչ թե ճորտացմամբ է սկսվում գյուղացիների էքսպրոպրիացիան, ընդհակառակը՝ ճորտատիրության «վերացումից» է սկսվում այն, այդպես է եղել Անգլիայում, այդպես է եղել Ռուսաստանում, այդպես է կատարվել նաև մյուս երկրներում։[1]

Ճորտացման և էքսպրոպրիացիայի պրոցեսները դիտել որպես միևնույն պրոցեսի երկու կողմեր, դա սխալ է, քանի որ դրանք երբեք և ոչ մի դեպքում միմյանց հետ միասնություն չեն կազմում։ Գյուղացիների էքսպրոպրիացիան պատմականորեն հաջորդում է ճորտացմանը և բացասում նրան։ Ընկ. Զալոյանը ճիշտ չէ նաև այն հարցում, որ ճորտացումը Հայաստանում անջատում էր գյուղացուն արտադրամիջոցներից։ Ճորտացած գյուղացին Հայաստանում չէր դադարում սեփական արտադրամիջոցներ ունենալուց, նա ընչազուրկ չէր և

[1] Վ. Կ. Զալոյան, Հայկական վերածնության մասին, էջ 97։

կախման մեջ էր գտնվում հողատիրոջից։ Այլ խոսքով ասած՝ ճորտացման հետևանքով ստեղծվեցին ֆեոդալական տնտեսության զարգացման համար բոլոր անհրաժեշտ պայմանները։ X—XI ապա և XII—XIII դարերում Հայաստանում ոչ թե կատարվում էր անցում ֆեոդալական շահագործումից դեպի կապիտալիստական շահագործումը, այլ կատարվում էր շահագործման ֆեոդալական ձևերի ամրապնդումը։ Ընկ. Զալոյանը չի նկատում, որ եթե մինչև X դարերը Հայաստանում աշխատավճար ռենտան որպես ֆեոդալական ռենտայի ձև գրեթե բացառություն էր, X դարից սկսած այն լայն ծավալ է ստանում։ Այս կապակցությամբ արժե հիշեցնել ընկ. Զալոյանին իր իսկ կողմից բերած փաստերը։ «Երկրագործական պրիմիտիվ գործիք արորը Անիի շրջանի Հայաստանում տեղ-տեղ փոխարինվում է երեք զույգ եզ լծած երկաթե ծանր գութանով՝ «վեցկեով»։ Կիրառվում է հողի մշակման եռադաշտյան սիստեմը, յուրացվում են նոր հողեր, ընդարձակվում են ցանքատարածությունները»[1]։ Գյուղատնտեսության մեջ կատարվող այս փոփոխություններն ու տեղաշարժումներն ոչ ոք չի հերքում։ Սակայն այդ ամենը ֆեոդալիզմին հատուկ արտադրողական ուժերի զարգացման պրոցեսներ են լոկ։ Նրանք ցույց են տալիս ո՛չ թե ֆեոդալական հարաբերությունների շրջանակներում այլևս չտեղավորվող արտադրամիջոցների և ագրիկուլտուրայի երևան գալը, այլ ճիշտ հակառակը։ Ավելին, դրանք պայմաններ էին, որոնք անխուսափելի էին դարձնում կոռային աշխատանքը և ոչ թե գյուղացու էքսպրոպրիացիան։ Հենց այդ երևույթների ուղղակի ներգործության տակ էր, որ Հայաստանում առաջ եկավ «վեցկե» կոռը ինչպես և կոռի բազմաթիվ այլ տեսակներ, որոնք մինչև Անիի շրջանը գոյություն չունեին։ Ընկ. Զալոյանը՝ խիստ ոգևորվելով գյուղատնտեսության «ինտենսիվությամբ», կատարում է այսպիսի հետևություններ. «այդ ժամանակաշրջանի գյուղատնտեսության ինտենսիվության ցուցանիշն այն է, որ նրա արտադրանքը երկրի ներքին պահանջարկը բավարարելուց զատ, արտահանվում էր նաև արտաքին շուկան, մի փաստ, որ հաստատվում է արաբական աղբյուրների հաղորդած տեղեկություններով»[2]։ Ընկ. Զալոյանը տվյալ դեպքում շոայլում է գյուղատնտեսության ինտենսիվություն հասկացողությունը և այն նույնացնում է գյուղատնտեսական արտադրանքը երկրից դուրս արտահանելու հետ։ Եթե մենք ինտենսիվության ցուցանիշ ընդունենք այդ, ապա կստացվի, որ ինտենսիվ էր Հայաստանի գյուղատնտեսությունը ո՛չ միայն Անիի շրջանում, այլև Արտաշեսյան շրջանում, Արշակունիների շրջանում։ Այս դեպքում առհասարակ չպետք է խոսվի էքստենսիվ գյուղատնտեսության մասին։

Գյուղատնտեսության ինտենսիվացումը այն չէ, երբ գյուղատնտեսական արտադրանքը արտահանվում է երկրից դուրս, այլ այն, երբ հողի տարածության մեկ միավորի վրա ծախսվող աշխատանքը մեծանում է այնպես, որ աշխատանքի լրացուցիչ ծախսումը հասցնում է համախառն արտադրանքի առավել աճին, դրանով իսկ իջեցնելով արտադրանքի միավորի վրա կատարվող ծախսը։ Քանի որ այսպիսի տվյալներ չկան, ուստի ընկ. Զալոյանի կողմից ներկայացված Անիի շրջանի գյուղատնտեսության ինտենսիվացման ցուցանիշը ոչինչ չի ասում ֆեոդալական հարաբերությունների քայքայման մասին։

Ծավալելով իր մտքերը արտադրողական ուժերի այնպիսի զարգացման

---

[1] Վ. Կ. Զալոյան, էջ 86—87։

[2] Նույն տեղում, էջ 87։

մասին, «որը դուրս է գալիս ֆեոդալական հասարակության էկոնոմիկայի սահմաններից», ընկ. Զալոյանը գրում է. «Գյուղատնտեսության արտադրողական ուժերի զարգացումն առաջ բերեց աշխատանքի բաժանում» արհեստագործության անջատում գյուղատնտեսությունից։ Անջատված արհեստագործական աշխատանքը այսուհետև սպասարկում է ոչ թե գյուղացու անձնական կամ սեփական կարիքները, այլ գյուղի ամբողջ արտադրության, ամբողջ գյուղատնտեսության կարիքները»[1]։ Նախ աշխատանքի այդպիսի բաժանումը սովորաբար հատուկ է ֆեոդալական հասարակությանը և այստեղ ոչինչ նոր բան չկա, որ դուրս եկած լիներ ֆեոդալիզմի էկոնոմիկայի սահմաններից, կամ խանգարեր նրա զարգացմանը։ Ապա մենք չենք կարողանում հասկանալ ընկ. Զալոյանի այն միտքը, թե արհեստագործության աշխատանքը սկսում է բավարարել գյուղի ամբողջ արտադրության, ամբողջ գյուղատնտեսության կարիքները։ Մենք հարց ենք տալիս ընկեր Զալոյանին, գյուղատնտեսության արտադրությունը կարիք ունի գործիքների, լծկան անասունի, սերմացուի և այլն, միթե այդ ամենը բավարարում էր գյուղատնտեսությունից անջատված արհեստագործական աշխատանքը։ Ի՞նչ կնշանակեն գյուղացու անձնական կամ սեփական կարիքներ, ամբողջ գյուղատնտեսության կարիքներ, ամբողջ գյուղի ամբողջ արտադրության կարիքներ և նման արտահայտություններ, որոնք այնքան շռայլորեն օգտագործել է նա—այդ անհասկանալի է մնում։

Տնտեսական այն տեղաշարժերից, որոնց մասին մեզ հավաստեց ինքը ընկ. Զալոյանը, նա կատարում է այսպիսի հետևություն. «Ճորտատիրության թույլ զարգացման պայմաններում, մինչև այն, երբ ճորտատիրությունը հաստատվում է, որպես գյուղի հասարակական հարաբերությունների իշխող ձև, տնտեսական այդ տեղաշարժերի հետևանքով սկսվում է արտադրամիջոցներից արտադրողի անջատման պրոցեսը»[2]։ Որպես այդ պրոցեսը դրսևորող երևույթ, նա բերում է փաստեր աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների կողմից գյուղացիների հողերը զավթելու մասին։ Ընկ. Զալոյանն այստեղ, սակայն, թերանում է ասել, որ այդ զավթած հողերին են ամրացվում երբեմնի ազատ համայնքի անդամ գյուղացիները։ Իրողությունն այն է, որ ոչ թե գյուղացին, ընչազրկման ենթարկվելով, քշվում էր գյուղից, այլ համայնքի հողերը զավթում էին ֆեոդալներն ու եկեղեցին, իսկ համայնքի անդամ գյուղացին էլ ճորտացվում էր։ Եթե մի րոպե մենք համաձայնենք ընկ. Զալոյանի հետ այն բանում, որ իրոք գյուղացիներին քշել են հողից և տնից, այն ժամանակ մենք հարց ենք տալիս՝ գյուղացիներից զավթած հողերը ու՞մ միջոցով էին մշակում ֆեոդալներն ու վանքերը։ Սրան մեկ պատասխան կարող է լինել—վարձու աշխատանքի միջոցով, որպիսին հաստատելն անշուշտ անհնար է։

Ընկ. Զալոյանը մեզ հավաստում է, թե հողից ու տնից զրկված մարդկանց հեղեղը գյուղից մեկնում էր քաղաք, որտեղ նրան բաժին էր ընկնում մուրացողի, գողի կամ ավազակի ծանր ճակատագիրը։ Այստեղ ընկ. Զալոյանը մոդեռնիզացիայի է ենթարկել Անգլիայի պատմությունը և փոխադրել Հայաստան, մոռանալով, որ այս դեպքում ծայրը ծայրին հասցնելը դժվար է։ Հարցնում ենք ընկ. Զալոյանին, այդ «մարդկային հեղեղը», որ, էքսպրոպրիացիայի ենթարկված, գալիս էր քաղաք, դրանց հողերն ինչի էին վերածված՝ արոտատե-

[1] Վ. Կ. Զալոյան, էջ 87։
[2] Նույն տեղում, էջ 90։

ղերի թե՞ ֆերմերական տնտեսության։ Ովքե՞ր էին զավթած հողերի տերերը. գյուղական ֆերմերները թե՞ արդյունաբերական ձեռնարկատերերը։

Ընկ. Զալոյանը ընչազրկվածների մի մասին դարձնում է շինարարական բանվորներ։ «Այդ ժամանակաշրջանում Հայաստանի քաղաքներում, ինչպես արդեն ասված է, գոյություն ունեին մանր կամ խոշոր արհեստանոցներ, որտեղ խոշոր չափով վարձու աշխատանք էր կատարվում։ Այս վերջինը կիրառվում էր ոչ միայն արհեստանոցներում, այլև քաղաքներում զանազան աշխատանքներ կատարելիս, մասնավորապես քաղաքային շինարարության զանազան օբյեկտները։ Իսկ չէ որ Հայաստանն այդ ժամանակաշրջանում հռչակված էր իր վիթխարի շինարարությամբ, որի խոշոր մասշտաբը մեզ համար կարող է լինել վարձու աշխատանքի կիրառման չափանիշը»[1]։ Այսպիսով, ընկ. Զալոյանը ոչ միայն ցույց տվեց, որ գյուղացիները ընչազրկվեցին, այլև նրանց աշխատանքի տեղավորեց քաղաքի արհեստանոցներում և շինարարության մեջ, որպես արտադրամիջոցներից զուրկ մարդկանց, որպես պրոլետարների։

Ընկ. Զալոյանը ընչազուրկների մի մասին էլ գյուղում է թողնում, որպես վարձու աշխատողների, մատնանշելով, որ «վարձու աշխատանքից օգտվում էին նաև շուկայի համար արտադրող խոշոր կալվածքները։ Ընդ որում հայտնի է, որ ամենուրեք վարձու աշխատողներն աշխատում էին ինչպես գործավարձի, այնպես էլ ժամանակավարձի պայմանով»[2]։

Եվ այսպես, X—XI դարերում Հայաստանում գյուղացիությունը ենթարկվեց էքսպրոպրիացիայի, վերածվեց թոշունի նման ազատ պրոլետարի, գյուղացիության հեղեղը գյուղից չվեց դեպի քաղաք, քաղաքում նա որպես վարձու բանվոր աշխատանք գտավ շինարարության մեջ և արհեստանոցներում։ Գյուղացիների մի մասն էլ վարձվեց կալվածքներում։ Այսպիսով, ընկ. Զալոյանի կարծիքով, Հայաստանում ձևավորվեց նոր դասակարգ, պրոլետարիատի դասակարգ։

Ընթերցողին համոզելու համար, որ Հայաստանում X-XI դարերում տեղի է ունեցել կապիտալի նախասկզբնական կուտակման պատմական պրոցեսը, ընկ. Զալոյանը իր հիպոթեզային ենթադրության հիման վրա խոսում է «արտադրության-կոոպերացման նախնական ձևի» մասին։ Բայց ո՞րն է այդ ձևը։ Լսենք հեղինակին։ «Վերևում մենք խոսեցինք երկրում աշխատանքի բաժանման և արտադրողական ուժերի աճման մասին, իսկ այստեղ մենք հարց կդնենք այն ժամանակ Հայաստանում արտադրության կոոպերացման նախնական ձևի գոյության մասին։ Մենք նկատի ունենք աշխատանքի միևնույն ասպարեզում արտադրության տիրոջ ղեկավարության ներքո արտադրողների միավորումը, արտադրության տեր, որն արդեն ազատվել է ձեռքի աշխատանքից»[3]։ Իսկապես, եթե կոոպերացիայի նախնական ձև ասելով, ընկ. Զալոյանը նկատի ունի կոոպերացիայի մինչկապիտալիստական ձևերը, ապա այդպիսի կոոպերացիան Հայաստանում ինչպես և ամեն մի երկրում գոյություն է ունեցել շատ հնուց և ոչ թե X—XIII դարերում, բայց այդ կոոպերացիան ոչ թե խարսխված էր վարձու բանվորի աշխատանքի վրա, այլ ուրիշ պայմանների վրա։ «Աշխատանքի պրոցեսում գոյացող այն կոոպերացիան, որ մենք գտնում ենք մարդկային կուլտուրայի սաղմնային աստիճանների վրա, օրինակ, որսոր-

[1] Վ. Կ. Զալոյան, էջ 99։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում։

դական ժողովուրդների մոտ կամ Հնդկաստանի հողագործության համայնքում, խարսխված է մի կողմից արտադրության պայմանների ընդհանուր սեփականության, մյուս կողմից այն բանի վրա, որ առանձին անհատը դեռ չի կտրել այն պորտաթելը, որ նրան կապում է տոհմի կամ համայնքի հետ, և տոհմի հետ նույնքան սերտորեն է զոդված, որքան անհատ մեղուն փեթակի հետ։ Թե մեկը և թե մյուսը այդ կոոպերացիան տարբերում են կապիտալիստական կոոպերացիայից»[1]։ Այսպիսով, եթե խոսքը վերաբերում է իրոք կոոպերացիայի նախնական ձևին, ապա այդ ձևը ոչինչ ընդհանուր չունի այն կոոպերացիայի հետ, որ մեզ ներկայացնում է ընկ. Զալոյանը։ Նրա ներկայացրած կոոպերացիան դա կապիտալիստական կոոպերացիան է, միայն այն տարբերությամբ, որ ընկ. Զալոյանը Մարքսի ձևակերպումից մի քիչ հեռացել է։ Կապիտալիստական պարզ կոոպերացիայի մարքսյան ձևակերպումը հետևյալն է։

«Մեծ թվով վարձու բանվորների միաժամանակյա կիրառումը աշխատանքի միևնույն պրոցեսում, որպես այդ փոփոխության պայման, կազմում է կապիտալիստական արտադրության ելակետը, համընկնում է կապիտալի բուն գոյության հետ»[2]։ Դժվար չէ նկատել, որ ա՛յն, ինչ Մարքսն անվանում է կապիտալիստական պարզ կոոպերացիա, Զալոյանը անվանում է արտադրության կոոպերացման նախնական ձև։ Բայց դա քիչ է։ Զգտելով ապացուցել, որ X—XIII դարերում Հայաստանն ապրել է կապիտալի նախասկզբնական կուտակման շրջան, ընկ. Զալոյանն այնքան հեռու է գնացել, որ միջնադարյան արհեստավորի արհեստանոցը ներկայացրել է որպես կապիտալիստական մանուֆակտուրա։ Մարքսը, խոսելով կապիտալիստական պարզ կոոպերացիայի մասին, այն կարծիքն է հայտնում, որ նա տիրապետող ձև է հանդիսանում արտադրության այն ճյուղերում, որտեղ կապիտալը գործում է լայն մասշտաբով, իսկ աշխատանքի բաժանումը և մեքենաները դեռ զգալի դեր չեն խաղում[3]։ Իսկ ի՞նչ է ասում ընկ. Զալոյանը Անիի շրջանի արհեստագործության արտադրության մասին։

«Ձեռքի տակ չունենալով բավականաչափ ծանրակշիռ փաստեր, որոնք հաստատեին այն ժամանակաշրջանում Հայաստանում արտադրության կոոպերացման նախնական ձևերի առկայությունը, այնուամենայնիվ, ելնելով երկրի տնտեսական կյանքի ընդհանուր վերլուծությունից, առայսօր մեր ձեռքի տակ եղած նյութի հիման վրա, պնդում ենք, որ՝ այն ժամանակվա Հայաստանի էկոնոմիկայում անպայման գոյություն են ունեցել պարզ կոոպերացիան և մանուֆակտուրան (ընդգծումը մերն է—Հ.Թ.), գերազանցապես վարձու աշխատանքի հիման վրա»[4]։ Ընկ. Զալոյանի այս անփաստարկ պնդումը ամրացվում է մի այլ անհիմնավոր հայտարարությամբ, որի բովանդակությունը հանգում է հետևյալին. «Կասկածից վեր է, որ Հայաստանում այդ ժամանակ գոյություն ունեին մասնագիտացված խոշոր արհեստանոցներ, որտեղ աշխատանքի բաժանումը արտահայտվում է ոչ միայն արհեստագործական արտադրության առանձին ճյուղերի մասնագիտացումով, այլև պետք է ենթադրել նրանով, որ

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, էջ 352։
[2] Նույն տեղում, էջ 353։
[3] Նույն տեղում, էջ 253։
[4] Վ. Կ. Զալոյան, էջ 99։

արտադրության միևնույն ճյուղում առանձին աշխատողը մասնագիտանում է աշխատանքային զանազան պրոցեսներ կատարելու մեջ»[1]։ Այսպիսով, ընկ. Զալոյանը ձեռքի տակ չունենալով բավականաչափ՝ թեկուզ և ոչ ծանրակշիռ փաստեր, իր հիպոթեզային ենթադրության հիման վրա Անիի ժամանակաշրջանը համարում է կապիտալիստական մանուֆակտուրայի շրջան։ Իսկ երբ ընկ. Զալոյանը ձեռք է բերել մի հատիկ «փաստ» այն մասին, որ «վարձու աշխատողները սովորել են վերակացուն երևալիս ջանասիրություն ցուցաբերել աշխատանքում», ապա ընկ. Զալոյանը դուրս գալով նույնիսկ արդյունաբերության մեջ կապիտալիզմի զարգացման երկու աստիճաններից էլ, դրությունն այնպես է ներկայացրել, որ ինքը գործ ունի արդեն զարգացած կապիտալիստական հարաբերությունների հետ, որ հավելյալ արժեքը շահույթի կերպարանք է ընդունում, գործում է շահույթի նորմայի օրենքը։

Այսպիսով, ոչ միայն «ապացուցվում է» կապիտալի նախասկզբնական կուտակման լինելիությունը, այլև այդ հիմքի վրա զարգացած կապիտալիզմի գոյությունը։ Իր հետևությունները ընկ. Զալոյանը այսպես է ամփոփում։ «Այս ամենը խոսում է կոոպերատիվ արտադրության մասշտաբի մասին, որը կարող էր ապահովել ձեռնարկատիրոջ շահույթի նորման, վարձու աշխատողների աշխատավարձը, վերակացուի, և, իհարկե, անմիջականորեն արտադրական աշխատանքով չզբաղվող մյուս, ավելի պակաս կարևոր աշխատողների վարձը»[2]։ Չնայած, որ այստեղ ներկայացված է զարգացած կապիտալիստական արտադրությունը, կապիտալիստական ձեռնարկությունը ղեկավարելու հատուկ հիերարխիան, այս բոլորից հետո հանկարծ արվում է այսպիսի շշմեցուցիչ հայտարարություն. «Կասկածից վեր է, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք արտադրության կոոպերացման հետ, որը պետք է դիտվի որպես արտադրության կապիտալիստական եղանակի սաղմ հայ պատմական իրականության մեջ։ Բայց միայն սաղմը, ոչ ավելին»[3]։ Հարկ է տարբերել տնտեսական կատեգորիաներ, տվյալ դեպքում՝ աշխատավարձ, շահույթ, շահույթի նորմա, կատեգորիաներ, որոնք բնութագրում են կապիտալիստական արտադրության ոչ թե սաղմնային վիճակը, ոչ էլ մանկությունն ու պատանեկությունը, այլ նրա բավականաչափ հասուն վիճակը։

Մենք մեր կողմից կարող ենք ավելացնել, որ այն, ինչ ներկայացրել է ընկ. Զալոյանը, ոչ թե սաղմ է, այլ զարգացած կապիտալիզմ, բայց քանի որ նա որոշել է Հայաստանի էկոնոմիկան ներկայացնել որպես կապիտալի նախասկզբնական կուտակման շրջանի էկոնոմիկա, ուստի և այն անվանում է «միայն սաղմ և ոչ ավելին»։

Չնայած, որ ընկ. Զալոյանը մեզ զգուշացնում է, թե Հայաստանում քննարկվող ժամանակաշրջանում գոյություն է ունեցել կապիտալիստական արտադրության սաղմը միայն, այնուհանդերձ այդ սաղմն ըստ երևույթին շատ արագ է զարգանում և հետևյալ էջերում դառնում հասուն կապիտալիզմ, թեպետ և իրականության մեջ այդպիսի բան չի եղել։ Զգտելով տնտեսագիտության օգնությամբ լուծել իր առջև դրված հարցը, ընկ. Զալոյանը մի շատ

---

[1] Վ. Կ. Զալոյան, էջ 88։
[2] Նույն տեղում, էջ 100։
[3] Նույն տեղում։

հետաքրքիր հարց է բարձրացնում։ Դա հասարակական հարստության արտահայտության ձևի հարցն է։

Բայց ի՞նչով էր արտահայտվում այդ ժամանակվա հասարակության հարստությունը, որո՞նք էին նրա կուտակման աղբյուրները,— հարցնում է ընկ. Զալոյանը և պատասխանում։ «Ընդհանրապես ասած, սոցիալ-տնտեսական տարբեր ֆորմացիաներում հասարակության հարստությունը տարբեր ձևով է արտահայտվում։ Եթե արտադրության կապիտալիստական եղանակի տիրապետության ժամանակ հասարակության հարստությունն արտահայտվում էր «ապրանքների հսկայական կուտակումով» (Կ. Մարքս), ապա այդ չէր կարող լինել ֆեոդալական հասարակության փակ բնատնտեսության ժամանակ, երբ արտադրության նպատակն էր արդյունքի սպառողական արժեքը»[1]։ Այստեղից էլ ուղղակի եզրակացնում է. «Ապրանքների հենց այդ արտադրությամբ էր արտահայտվում հայ հասարակության սոցիալական որոշ խավի հարստությունը, փոքրամասնության հարստությունը։ Ապրանքների արտադրությունը գյուղատնտեսության մեջ՝ խոշոր «վոտչինայի», նրա հսկայական ցանքատարածության, արոտավայրերի, այգիների, գյուղացիների, յուղագործության արդյունքն էր. ապրանքների արտադրությունը քաղաքներում՝ խոշոր արհեստանոցների (ըստ ընկ. Զալոյանի մանուֆակտուրաների—Հ. Թ.) արհեստագործական աշխատանքի և այն ամենի արդյունք էր, ինչ կապված է քաղաքային կյանքի հետ և օգուտ է բերում ձեռնարկատիրոջը, այդ թվում խանութները, հյուրանոցները, բաղնիքները և այլն։ Փոքրամասնության ձեռքում հարստության կուտակման պրոցեսը Հայաստանում ուներ նաև մի այլ աղբյուր՝ ներքին և արտաքին առևտուրը և դրա հետ կապված այն առևտուրը, որի օբյեկտը փողն էր, այն վաշխառուական կապիտալը, որի ներգործության ոլորտում էր գտնվում ինքը, ապրանքային արտադրությունը»[2]։ Այսպիսով, քանի որ կապիտալիստական արտադրությունը իրենից ներկայացնում է ապրանքների մի հսկայական հավաքածու, ընկ. Զալոյանն էլ ցույց տվեց, որ Հայաստանում ևս գոյություն ուներ ապրանքների նման հավաքածու և էլի ուրիշ բաներ։ Այժմ մնում է ասել, որ Հայաստանում X—XIII դարերում տիրապետում էր արտադրության կապիտալիստական եղանակը։ Զգուշավորության համար Զալոյանը այդ ասում է հետևյալ կերպ. «Սակայն կուտակման պրոցեսը դրանով չի ավարտվում (այսինքն նախասկզբնական կուտակմամբ—Հ. Թ.). այն առաջ է բերում աշխատավորների նոր հրեշավոր շահագործումը, որովհետև նոր ծագած խոշոր արտադրությունը գյուղում, արհեստանոցներն ապրանքներն արտադրում էին աշխատավորների ձեռքով, նրանք կարող էին աճել ու ծաղկել միայն անմիջական արտադրողի շահագործման հաշվին»[3]։ Ընկ. Զալոյանը չի ուզում հասկանալ, որ երբ խոսքը վերաբերում է նախասկզբնական կուտակման բազայի վրա հետագայում տեղի ունեցող կուտակմանը, դա հենց կապիտալի կուտակումն է, նրա միակ աղբյուրը հավելյալ արժեքն է, որ քամվում է աշխատավորներից, նրանց հրեշավոր շահագործման ենթարկելու միջոցով։ Եվ այսպես, ընկ. Զալոյանը ուզում է ցույց տալ կապիտալի նախասկզբնական

---

[1] Վ. Կ. Զալոյան, էջ 100—101։
[2] Նույն տեղում, էջ 101։
[3] Նույն տեղում։

կուտակում, բայց նրա վրա ավելացնում է և կապիտալի կուտակում, ուզում է ցույց տալ սաղմը, դուրս է գալիս հասուն պտուղ։

Հասկանալի է, որ այս ամենից հետո, որքան էլ ընկ. Ջալոյանը ծանոթագրություններ և զգուշացումներ կատարի, թե ինքը նախասկզբնական կուտակման պատմությունը համարում է ֆեոդալական հասարակության պատմության մի որոշ աստիճան, որ այն միայն պոտենցիալ կերպով է կրում իր մեջ կապիտալիստական կուտակում՝ նման այլ զգուշացումներ, նրա կողմից Հայաստանի X—XI և XII—XIII դարերի էկոնոմիկայի մասին կատարած անալիզը ստեղծում է այն պատկերացումը, թե Հայաստանն ապրել է կապիտալիստական հասարակատնտեսական ֆորմացիա՝ նրա պարզ կոոպերացիայի և մանուֆակտուրայի շրջանում։

Ընկ. Ջալոյանը վերջ ի վերջո գալիս է այն եզրակացության, թե «Անիի Հայաստանը գտնվում էր հասուն ֆեոդալական հասարակության ստադիայում, իր զարգացման մեջ հասավ արտադրության ֆեոդալական հասարակության բարձրագույն աստիճանին»։ Ախր չէ՞ որ ձեր քննության ընթացքում դուք ֆեոդալիզմից ոչինչ չթողեցիք, հիմա էլ խոսում եք հասուն ֆեոդալիզմի, բարձրագույն ֆեոդալիզմի, կապիտալիստական տենդենցի, հնի, նորի և զանազան բաների մասին։

Իրական դրությունն այն է, որ Անիի շրջանի Հայաստանում ոչ թե կատարվում էր անցում ֆեոդալական շահագործումից դեպի կապիտալիստական շահագործումը, այլ տեղի էր ունենում ֆեոդալական շահագործման ձևերի ամրապնդումը։

Իհարկե, Անիի շրջանում գոյություն ուներ և աճում էր ապրանքային արտադրությունը, աճում էր դրամաշրջանառությունը, առևտուրը, վաշխառությունը։ Սակայն ինչպես ընկ. Ջալոյանը, այնպես էլ մյուս ընկերները, որոնք ընդունում են, որ Հայաստանն ապրել է նախասկզբնական կուտակման պատմական պրոցեսները, անտեսում են իրենց կողմից օգտագործվող տնտեսական կատեգորիաների էությունը, դրանց զարգացման աստիճանը։ Փողը, առևտուրը, վաշխառությունը իրենց զարգացման տվյալ աստիճանում արդյոք չէի՞ն ծառայում ֆեոդալիզմի ամրապնդմանը։ Ընկերները մոռանում են, որ և՛ փողը, և՛ առևտուրը, և՛ վաշխառությունը երևույթներ են, որոնք առաջացել են ոչ թե զարգացած ֆեոդալիզմի կամ նրա քայքայման շրջանում, այլ նրանք բոլորն էլ շատ հին ծագում ունեն։ Այս հանգամանքը հաշվի չառնելով՝ նախասկզբնական կուտակման կողմնակիցները, այդ բոլոր կատեգորիաները ապրիորի կերպով ընդունում են որպես կապիտալ։ Վերցնե՛նք ապրանքային արտադրությունը։ X—XIII դարերում իրոք որ Հայաստանում աշխատանքի հասարակական բաժանման հիման վրա զարգանում էր ապրանքային արտադրությունը, սակայն այն դեռևս չէր քայքայում ֆեոդալական արտադրաեղանակը, քանի, որ այդ զարգացումը դեռևս չէր հասել այն աստիճանի, որ մանր արտադրողներին վերածեր վարձու բանվորների։ Փողն ու ապրանքը,— ասում է Մարքսը,— հենց սկզբից կապիտալ չեն, ինչպես և չեն արտադրամիջոցները և կենսամիջոցները։ Նրանք կարող են կապիտալ դառնալ միայն որոշ պարագաներում։ Այդ պարագաներն են. «Երկու շատ տարբեր տեսակի ապրանքատերեր պետք է իրար դիմացդան և շփման մեջ մտնեն, մի կողմից՝ փողի, արտադրամիջոցների և կենսամիջոցների տերերը, որոնք հետամուտ են ուրիշի աշխատուժը գնելու միջոցով իրենց յուրացրած արժեզումարը մեծացնելուն, մյուս կողմից՝ ազատ բանվորները՝

իրենց սեփական աշխատուժը ծախողները, ուրեմն՝ աշխատանքի վաճառորդները։ Ազատ բանվորներ՝ այն երկակի իմաստով, որ ոչ նրանք իրենք են անմիջարար պատկանում արտադրամիջոցների թվին, ինչպես որ են ստրուկները, ճորտերը և այլն, ոչ էլ արտադրամիջոցներն են պատկանում նրանց, ինչպես, որ լինում է ինքնակամ տնտեսություն վարող գյուղացու և այլոց մոտ. նրանք ազատ, զուրկ ու թափուր են մանավանդ հենց արտադրամիջոցներից»[1]։

Չի կարելի ասել, թե X—XIII դարերում Հայաստանում չեն եղել զուրկ ու թափուր մարդիկ, սակայն դրանք բացառություններ էին՝ ճորտ և կախյալ, սակայն արտադրամիջոցների տեր գյուղացիների օվկիանոսում։ Այդ պայմաններում փողն ու ապրանքը ոչ թե քայքայում էին ֆեոդալիզմը, այլ ծառայում էին նրա զարգացմանը։ Ճիշտ է, ճորտ գյուղացիներից ոմանք փորձեր էին կատարում փախչելու դեպի քաղաք, սակայն մենք գիտենք, որ այդ երևույթները ոչ միայն չէին ծավալվում, այլ կանխվում էին պետական օրենքներով։ Տիրապետող դասակարգի կողմից անմիջական արտադրողներին շահագործելու հիմնական ձևը մնում էր հողային ռենտան։ Ճիշտ է, ապրանքային արտադրության և քաղաքների զարգացման հետ միասին առաջ էին եկել վաճառականներն ու վաշխառուները, սակայն սրանց հարստության հիմնական ձևը շարունակում էր մնալ փողը, իսկ եթե սրանք ձեռք էին բերում հողային կալվածքներ, ապա դրանք մեծ մասամբ նվիրարերում էին վանքերին ու եկեղեցիներին։ Ուրիշ խոսքով ասած՝ վաճառականությունն ու վաշխառությունը ոչ թե քայքայում էին ֆեոդալական կալվածքը, այլ օժանդակում էին նրա զարգացմանը։ Հայաստանում կային նաև օրավարձով աշխատողներ, սակայն դրանք նույնպես բացառություններ էին և չէին որոշում արտադրության դեմքը։ Ամբողջապես վերցրած, արհեստը, առևտուրը, քաղաքները և սրանց զարգացումը հետևանք էր ոչ թե կալվածատիրական տնտեսության քայքայման, այլ հետևանք էր X դարի երկրորդ կեսից սկսած գյուղատնտեսության մեջ հավելյալ արդյունքի (ռենտայի ձևով) անչափ աճման։

Հավելյալ արդյունքի իրացման պրոբլեմին էր ծառայում հետագայում արհեստի և առևտրի մի շարք կենտրոնների, ի դեմս քաղաքների առաջանալն ու զարգանալը։ Անվիճելի է, որ վերջիններս ֆեոդալական հասարակության կյանքում էական դեր էին խաղում, առաջ մղելով նրա զարգացումը։ Քաղաքային կյանքի զարգացման զուգահեռ վաճառականությունը և վաշխառությունը հետզհետե մեծ ծավալ էր ստանում։ Եթե մենք արստրահենք պատմական կոնկրետ պայմաններից և վերացականորեն դատենք, ապա մենք կարող ենք ասել, որ զարգացման տենդենցը որոշ ժամանակամիջոցից հետո պետք է հասցներ ֆեոդալիզմի քայքայմանը։ Սակայն քննարկվող ժամանակաշրջանը իր մեջ չի պարունակում քայքայման երևույթներ, այլ ընդհակառակը՝ դրանք բոլորն էլ դեռևս ծառայում էին ֆեոդալիզմին։

Եզրակացությունն այն է, որ X դարից Հայաստանը վաղ ֆեոդալիզմի շրջանից անցավ զարգացած ֆեոդալիզմի շրջանը։ Այդ զարգացումը լայն ծավալ ստանալով, շարունակվեց մինչև XIII դարի սկզբները, չհասնելով սակայն ֆեոդալիզմի քայքայման աստիճանին։

Հայաստանի տնտեսական կյանքի հուժկու վերելքը առաջին հարվածն ստացավ դեռևս 1045 թ, երբ Հայաստանը ենթարկվեց բյուզանդական ագրե-

---

1 Կ. Մարքս. Կապիտալ, հատ. I, էջ 686։

սիային, ապա և դրան հաջորդող սելջուկ Թուրքերի հարձակմանը։ Ավելի ուշ, երբ Հայաստանը ենթարկվեց մոնղոլական արշավանքներին, դրա հետևանքով տնտեսական կյանքի զարգացումը միանգամայն հասկանալի պատճառներով ոչ միայն ընդհատվեց, այլև հետադիմեց։ Ուրեմն ֆեոդալիզմը դեռևս չէր ապրում իրեն քայքայման աստիճանը, երբ Հայաստանի էկոնոմիկան արհեստականորեն շեղվեց իրեն զարգացման բնական ընթացքից, հետադիմեց, ուստի և չհասավ կապիտալի նախասկզբնական կուտակման համար անհրաժեշտ զարգացման մակարդակին։

Այսպիսով, եթե հայկական Վերածնության մասին մի շարք ընկերների համար տնտեսական հիմք է ծառայում կապիտալի նախասկզբնական կուտակումը, ապա այդ տեսակետը պատմականորեն հիմնավորված չէ և, ըստ երևույթին, հարկ կա, որ նրանք ուրիշ հիմքեր որոնեն։ Այս է մեր եզրակացությունը։